ՎԱՀԱԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳԼՈԲԱԼ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանը հայտնվեց գլոբալ աշխարհում, որն ունի զարգացման իր օրինաչափությունները և ուրույն հիմնախնդիրները: Ինչպիսի՞ն է լինելու Հայաստանի տեղը գլոբալ աշխարհում, տնտեսական, քաղաքական և ընդհանրապես, մշակութային զարգացման ինչպիսի՞ հեռանկարներ են բացվում նրա առաջ, ի՞նչ ուղիներով է ընթանալու Հայաստանի արդի քաղաքական մշակույթի զարգացումը, ընդունելի՞ է արդյոք արևմտյան քաղաքական մշակույթի արմատավորումը Հայաստանում: Այս հարցերին պատասխանելու համար պետք է քննարկել բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնցից յուրաքանչյուրը ինքնուրույն հետազոտության առարկա է: Հասկանալի է, որ նշված հիմնախնդիրները չեն կարող բազմակողմանիորեն քննարկվել այս աշխատանքի շրջանակներում, այդ պատճառով կանգ կառնենք նշված հարցադրումների միայն առանձին կողմերի վրա և սոսկ այն չափով, որ հնարավոր լինի ամենաընդհանուր պատկերացում կազմել Հայաստանի մշակութային զարգացման, մասնավորապես, քաղաքական մշակույթի զարգացման հեռանկարների մասին:

Դեռևս անցյալ դարի սկզբներին երկաթուղին և հեռախոսը հնարավորություն ընձեռեցին բազմազան կապեր հաստատելու աշխարհի տարբեր մասերում գտնվող ժողովուրդների և պետությունների միջև: Աշխարհի ժողովուրդների, պետությունների և մայրցամաքների կապերն ընդլայնվեցին և նրանց փոխազդեցությունը նոր թափ առավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ աննախադեպ զարգացան տրանսպորտի և կապի միջոցները, և աշխարհը ժամանակային և տարածական առումով, կարծես թե սեղմվեց: Այդ ժամանակից արդեն սկսեցին խոսել աշխարհի գլոբալիզացիայի մասին: Սակայն գլոբալիզացիան տարբեր երկրների, մոլորակի ժողովուրդների և մայրցամաքների փոխկապակցվածությունը և փոխազդեցությունը չէ միայն: Այն

ունի առավել խոր և համընդգրկուն իմաստ: Տեսակետներից մեկի համաձայն գլոբալիզացիան ներկայումս նույնացվում է կապիտալիստական ինդուստրիալ հասարակությունից ետինդուստրիալ կամ տեխնոլոգիական հասարկության անցնելու համաշխարհային գործընթացի հետ: Գլոբալիզացիան արագանում է հատկապես ԱՄՆ-ում արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության զարգացման բարձր տեմպերով, փոխակերպում է կյանքը ոչ միայն ամբողջ աշխարհում, այլև այդ առաջատար երկրում:[1]

Ներկայումս աշխարհի գլոբալիզացիան իր ճշգրտումներն է մտցրել մոլորակի ժողովուրդների հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Այն ցայտունորեն դրսևորվում է հատկապես տարբեր հասարակությունների տնտեսական կյանքում: Առաջատար երկրներում աճում են արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության, սպառման տեմպերը, նյութական արտադրության մեջ ներդրվում են բարձր տեխնոլոգիաներ: Աստիճանաբար ողջ մոլորակի մասշտաբով տեղի է ունենում աշխատանքի բաժանում: Աշխարհում ստեղծվել և արդյունավետ գործում են վերազգային կորպորացիաներ, որոնք, ըստ էության, ազգային և պետական սահմաններ չեն ճանաչում: Տնտեսության գլոբալիզացիան հանգեցրել է նրան, որ ավելի ու ավելի է բարդացել կոնկրետ կառավարությունների կողմից իրենց երկրների տնտեսական գործընթացները, մասնավորապես, ապրանքների գները, և համապատասխանաբար, բնակչության կենսամակարդակի տատանումները վերահսկելը: Այսպես, օրինակ, նավթի արդյունահանման չափաքանակների կրճատումը, որն իրականացնում է նավթարդյունահանող երկրները միավորող միջազգային տնտեսական կազմակերպությունը, ազդում է կոնկրետ երկրների բենզինի և այլ ապրանքների գների վրա: Դա վերաբերում է նաև մեծ պահանջարկ ունեցող մի շարք այլ ապրանքներին, ինչպիսիք են սուրճը, հացահատիկը և այլն: Միջազգային տնտեսական կազմակերպությունների և վերազգային կորպորացիաների գործունեության արդյունքների նկատմամբ հատկապես զգայուն են տնտեսապես թույլ երկրները, ինչպիսին է նաև Հայաստանը:

Միևնույն ժամանակ, աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները հակառակ ազդեցություն են գործում վերազգային կորպորացիաների գործունեության վրա: Այսպես, արտարժութային և արժեթղթերի շուկաները ակնթարթորեն արձագանքում են երկրագնդի ցանկացած վայրում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, անմիջապես ուղղումներ են կատարում իրենց ֆինանսական քաղաքականության մեջ, որն իր հերթին փոփոխություններ է առաջացնում կոնկրետ երկրների ֆինանսական և տնտեսական կյանքում:

Տնտեսության գլոբալիզացիան ինքնաբերաբար ստեղծում է տնտեսական գործունեության միջազգային կոորդինացիայի և ինտեգրացիայի անհրաժեշտություն, համապատասխանաբար, ստեղծվում են համաշխարհային և տարածաշրջանային ընդհանուր և ճյուղային կազմակերպություններ:

Գլոբալիզացիան փոփոխություններ է առաջացրել նաև քաղաքականության աշխարհում: Ներկայումս աշխարհում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ կոնկրետ երկրների ներքաղաքական հարցերը չեն կարող չընդգրկել արտաքին քաղաքական տարրեր, և ընդհակառակը: Աշխարհի այս կամ այն երկրներում ընդունվող որոշումները, առանձին պետությունների գործողությունները ուղղակի կամ անուղղակի ազդեցություն են գործում այլ երկրների հասարակական-քաղաքական կյանքի վրա: Այսպես, օրինակ, դարասկզբին իրագործված հայերի ցեղասպանության հարցի քննարկումը արևմտյան երկրներում, ցեղասպանության ճանաչման կամ ճանաչումը մերժելու որոշումները ուղղակի ազդեցություն են գործում ինչպես Հայաստանի, այնպես էլ Թուրքիայի, Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքի վրա: Ներկայումս աշխարհում գործում են համաշխարհային և տարածաշրջանային բազմաթիվ կազմակերպություններ և ռազմաքաղաքական դաշինքներ, իսկ որոշ կազմակերպություններ, ինչպես օրինակ, Եվրոխուրհուրդը, Միջազգային դատարանը, Ինտերպոլը և այլն, արդեն իսկ իրականացնում են քաղաքական ինտեգրացիայի գործառույթներ:

Տնտեսական և քաղաքական կյանքի գլոբալիզացիան հանգեցրել է հասարակական կյանքի մյուս բոլոր ոլորտների գլոբալիզացիային: Այն ընդգրկել նաև մարդկանց ապրելակերպը, կենսաոճը, կենցաղը, ժամանցը, արվեստը և ողջ հոգևոր կյանքը:

Գլոբալիզացիայի խթանման հզոր գործոններից է հեռահաղորդակցման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, որոնք դարձել են ժողովուրդների շփման կարևորագույն միջոցներից մեկը: Դրանց շնորհիվ ընդլայնվում է մշակութային շփման և հաղորդակցման, տարբեր ժողովուրդների մշակութային փորձի փոխանակման հնարավորությունը: Բացի այդ, մոլորակի ցանկացած կետում կատարված իրադարձությունների մասին տեղեկատվությունը ակնթարթորեն տարածվում է աշխարհով մեկ, մի բան, որի շնորհիվ անսահմանորեն ընդլայնվում է, ասենք, քաղաքական գործիչների և քաղաքական կուսակցությունների լսարանը: Այս ամենը քաղաքագետներին հիմք է տալիս պնդելու հետևյալը. «Նշանակալից չափի վստահությամբ կարելի է ասել, որ հեռահաղորդակցման և տեղեկատվական տեխնոլոգիաները ստեղծում են նոր, գլոբալ, համամոլորակային տարածության-ժամանակի նման մի բան, երբ ցանկացած հեռավորության վրա տեղեկատվության ակնթարթային հաղորդման հնարավորության շնորհիվ տեղայինը դառնում է համաշխարհային, իսկ համաշխարհայինը՝ տեղային: Արդյունքում, ապահովվում է միասնական, համամոլորակային քաղաքականության տարածաժամանակային մի ենթակառուցվածք»:[2]

Գլոբալիզացիան ներառել նաև Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտները: Թեև Հայաստանը դեռևս իր տեղը չի գտել աշխատանքի համաշխարհային բաժանման մեջ, սակայն արտասահմանյան վերազգային կորպորացիաները այստեղ նույնպես արդեն մուտք են գործել, Հայաստանում բացել են իրենց ներկայացուցչությունները և գործունեություն ծավալել: Հայաստանի մի շարք ձեռնարկություններ, որոնք նախկինում Հայաստանի տնտեսական պարծանքն էին՝ կոնյակի գործարան, հեռախոսակապի համակարգ, ալյումինի գործարան և այլն, այժմ պատկանում են օտարերկրյա կազմակերպություններին, մի շարք այլ ձեռնարկություններ՝ Հրազդանի ՊՇԷԿ, բաշխիչ էլեկտրացանց և այլն, սպասում են վաճառքի: Հայաստանը հսկայական վարկային գումարներ է ստանում օտարերկրյա պետություններից կամ միջազգային կազմակերպություններից, առանց այդ վարկերի նա կարող է, պարզապես, շնչահեղձ լինել, դեռևս չստացված վարկային գումարները, սովորաբար, իրենց մշտական տեղն ունեն մեր պետական բյուջեյի եկամուտների

մասում: Հարկ է նշել, որ Հայաստանը վարկերն ստանում է որոշակի պայմաններ կատարելուց հետո, որոնք առաջ են քաշվում վարկատուների կողմից: Այդ պայմանները հիմնականում կապված են տնտեսության լիբերալացման հետ: Բացի այդ, Հայաստանը մի շարք միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների անդամ է՝ ՄԱԿ, Եվրոխորհուրդ, ԱՊՀ, Սևծովյան տարածաշրջանի երկրների տնտեսական համագործակցություն և այլն: Այդ կազմակերպությունների ուղղակի և անուղղակի միջնորդությամբ Հայաստանում արմատավորվում են արևմտյան քաղաքակրթության արժեքներ, մասնավորապես, արևմտյան քաղաքական մշակույթի տարրեր:

Աշխարհի գլոբալիզացիան տարբեր հարցեր է առաջացնում քաղաքագետների, մշակութաբանների և հասարակական գիտությունների այլ ներկայացուցիչների մոտ: Ի՞նչ գործընթացներ են տեղի ունենում աշխարհում, արդիականանու՞մ է արդյոք աշխարհը, թե՞ տեղի է ունենում աշխարհի վեստերնիզացիա, իսկ միգուցե՝ տարբեր քաղաքակրթությունների սինթե՞զ:

Աշխարհի երկրների մեծ մասի տնտեսության կազմակերպման հիմքում ընկած են լիբերալ գաղափարներ, ամենուր իշխում են շուկայական հարաբերություններ, տարբեր երկրներում բավական լայն տարածում են գտել ժողովրդավարական քաղաքական ինստիտուտներ: Բացի այդ, աշխարհում ամենուր՝ մարդկանց ապրելակերպում, կենցաղում, ժամանցում և այլն, տարածվել են արևմտյան քաղաքակրթության արտաքին դրսևորումները: Դա որոշ քաղաքագետներին հիմք է տալիս պնդելու, թե աշխարհն ընթանում է ռացիոնալ հասարակություն ստեղծելու ճանապարհով, հետևաբար, արևմտյան քաղաքակրթության կարևորագույն բաղադրյալները պետք է արմատավորել աշխարհի բոլոր երկրներում, և որ մարդկությունը այլ երկընտրանք չունի՝ բացի զարգացման արևմտյան ուղին և արևմտյան քաղաքակրթության արժեքները յուրացնելուց: Որոշ քաղաքագետներ ավելի հեռուն են գնում և հայտարարում, թե մարդկության զարգացման ուղին ամերիկյան իդեալների իրականացումն է: Համապատասխանաբար, նրանք պնդում են, թե աշխարհում ամենաազատ, ամենալիբերալ, ամենաժողովրդավարական երկիրը ԱՄՆ- է, և նրա հզորության և միջազգային ասպարեզում ունեցած ազդեցության աճը նպաստում է համաշխարհային մասշտաբով ազատության, բազմակարծության և ժողովրդավարու-

թյան հաստատմանը, դրանով իսկ՝ ամերիկյան իդեալների և այլ երկրների քաղաքական ինստիտուտների միջև եղած տարբերությունների նվազմանը:[3]

Մի կողմ թողնենք այն հարցը, թե որքանով է նպատակահարմար և ճիշտ մարդկության զարգացման արևմտյան ուղին: Նշենք միայն, որ ներկայումս, փաստորեն, տեղի է ունենում արևմտյան քաղաքակրթության և աշխարհի այլ քաղաքակրթությունների փոխազդեցություն, որի մեջ հիմնականը արևմտյան և արևելյան քաղաքակրթությունների բախումն է, արևմուտքի և արևելքի երկրների մշակույթների փոխազդեցությունը և բախումը: Հարկ է նշել, որ այդ բախման մեջ ագրեսիվ է հատկապես ԱՄՆ մշակույթը: Բավական է ասել, որ այսօր աշխարհի հաղորդակցման ուղիներում շրջանառվող տեղեկատվության 60 տոկոսը պատկանում է ԱՄՆ-ին:

Նշենք նաև, որ ոչ արևմտյան, և ոչ էլ արևելյան մշակույթները, միատարր չեն: Եթե արևմտյան մշակույթի մեջ կարելի է առանձնացնել անգլո-ամերիկյան և մայրցամաքային մշակույթները, ապա արևելքի երկրների մշակույթն ավելի խայտաբղետ է: Արևելքում առկա են պատմամշակութային ամենատարբեր իրողություններ: Մերձավոր արևելքում տարածված են արաբա-մահմեդական և թուրք-մահմեդական մշակույթները, միջին Ասիայում՝ թուրք- մահմեդական մշակույթը, արևելյան Ասիայում՝ բուդդայական-սինտոիստական, հնդուիստական և մահմեդական մշակույթները: Հարց է առաջանում՝ հայկական մշակույթը արևելյա՞ն, թե արևմտյան մշակույթի շարքն է դասվում: Մեր կարծիքով, այդ հարցին միարժեք դրական կամ բացասական պատասխան տալ չի կարելի: Հայկական մշակույթը չի կարելի զուտ արևելյան կամ արևմտյան մշակույթ համարել: Այն ուրույն և ինքնատիպ մշակույթ է, որը տարբերվում է ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան երկրների մշակույթներից, թեև ունի և մեկին, և մյուսին բնորոշ տարրեր: Դա պայմանավորված է ինքնատիպ լեզվի, ինքնատիպ կրոնի առկայությամբ, ինչպես նաև աշխարհագրական դիրքի առանձնահատկություններով:

Հատկանշական է, որ հայկական մշակույթը առանձին մշակույթ էր համարում նաև անգլիացի հայտնի պատմաբան Արնոլդ Թոյնբին (1889-1975): Ճիշտ է, նրա պատմափիլիսոփայական տեսությունը, որի հիմքում ընկած է մշակույթների հավասարարժեքության գաղափարը, տարբեր առումներով քննադատու-

թյան չի դիմանում, սակայն նա հայտնում է նաև մի շարք ուշագրավ տեսակետներ:[4]

Անգլիացի պատմաբանը գտնում էր, որ քաղաքակրթության բովանդակությունն են կազմում հասարակական կյանքի երեք տարր՝ տնտեսական, քաղաքական և մշակութային տարրերը: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում այդ տարրերի հարաբերակցությունը տարբեր է, սակայն վճռորոշն ու առաջնայինը մշակութային տարրն է, որը քաղաքակրթության հոգին է, արյունը, ավիշը, և քաղաքակրթության բնութագրման համար տնտեսական, առավել ևս քաղաքական տարրերն էական չեն:[5] Փաստորեն, նա նույնացնում էր մշակույթը և քաղաքակրթությունը: Այնուհետև, Ա.Թոյնբին գտնում էր, որ քաղաքակրթությունները աշխարհիկ, նյութական առումով անկրկնելի են, այդ պատճառով անհամեմատելի են: Քաղաքակրթություններին միավորում է սրբազան հիմքը՝ կրոնը: Համապատասխանաբար, նա առանձնացնում էր աշխարհի հինգ կենդանի քաղաքակրթություններ, որոնք պահպանվել են մինչև անցյալ դարի կեսերը: Այդ քաղաքակրթությունները, ըստ Ա.Թոյնբիի, հետևյալն են.

1. Արևմտյան քրիստոնեական քաղաքակրթություն, որը տարածված է Եվրոպայի և Ամերիկայի երկրներում: Այս քաղաքակրթության հիմքն են համարվում քրիստոնեության կաթոլիկ և բողոքական թևերը:

2. Ուղղափառ քրիստոնեական քաղաքակրթություն, որը տարածված է հարավ- արևելյան Եվրոպայում և Ռուսաստանում:

3. Իսլամական քաղաքակրթություն:

4. Հեռավոր- արևելյան քաղաքակրթություն, որը տարածված է Չինաստանում և Ճապոնիայում:

5. Հնդուիստական քաղաքակրթություն, որը տարածված է Հնդկաստանում: [6]

Այս շարքում նա ավելացնում էր ևս երկու քաղաքակրթություն, որոնք,նա համարում էր, այսպես կոչված, մնացուկային քաղաքակրթություններ: Այդ մնացուկային քաղաքակրթություններից են, ահա, ըստ Ա.Թոյնբիի, Հայաստանի, Եգիպտոսի, Մեսոպոտամիայի, Եթովպիայի միաբնակ քրիստոնյաների և Քրդստանի նեստորական քրիստոնյաների քաղաքակրթությունները և այլն:

Սակայն, հակառակ Ա.Թոյնբիի կարծիքի, հայ մշակույթը այսօր էլ կա և պահպանում է իր գոյությունը:

Այնուհետև, Ա.Թոյնբիի կարծիքով ամեն մի քաղաքակրթություն անցնում է մի քանի փուլերով՝ ծագում, զարգացում, փլուզում և քայքայում: Այս փուլերը ենթարկվում են, յուրահատուկ մի օրենքի, որը նա անվանում է «Մարտահրավեր- և - Պատասխան»: Այս օրինաչափության մեջ Մարտահրավերի դեր են կատարում ինչպես բնական միջավայրը, ուր առանձնացվում են «անպտուղ երկրների», «նոր երկրների» խթանիչները, այնպես էլ հասարակական միջավայրը: «Քաղաքակրթությունները ծնվում և զարգանում են՝ հաջողությամբ պատասխանելով հաջորդական Մարտահրավերներին,– ասում էր Ա.Թոյբնին:– Նրանք փլուզվում և քայքայվում են, երբ հանդիպում են այնպիսի Մարտահրավերի, որին չի հաջողվում պատասխանել»:[7]

Հայկական քաղաքակրթությունը աշխարհի հնագույն և ինքնատիպ քաղաքակրթություններից մեկն է, որին հաջողվել է պատասխանել բազմազան և բազմապիսի Մարտահրավերների: Մոտավոր հաշվարկներով հայ ժողովուրդն ունի ավելի քան չորս հազարամյակների պատմություն, և այդ ընթացքում պատասխանելով բնական և հասարակական միջավայրների կողմից նետված տարբեր Մարտահրավերներին՝ ստեղծել է չափազանց հարուստ և անկրկնելի մի մշակույթ: Ընդ որում, հայ ժողովրդի մշակույթը սնուցել է նաև հարևան ժողովուրդներին և իր բարերար ազդեցությունն է թողել շատերի մշակույթի վրա: Ակադեմիկոս Ն. Մառը, խոսելով հայկական մշակույթի մասին, ապշած բացականչում է. «Հարևան և մինչև անգամ հեռու ընկած ազգերից ո՞րն է, որ օգտված չլիներ հայոց ազգի կուլտուրական բարեմասնություններից, վիպասաններից եկող և աշուղներին հասած երկերից, նրա ճարտարապետական աննման զարգացած արվեստից, նրա այն բացառիկ լեզվական շնորհքից, որ թարգմանչական արհեստից ավելի արվեստ է, գիտություն և արվեստ միասին ձուլված գեղարվեստ է շինված, հին դարաշրջաններում ստեղծված է մի շարք դպրոցներ և տեսակ-տեսակ ոճ՝ ինքնուրույն գրվածքների համար պատրաստի ճոխ գրական լեզու ժառանգելով ժողովրդական վիպասաններից, նոր դարաշրջանում երկու գրական լեզու մշակելով կենդանի բարբառներից: Ի՞նչ աղ-

բյուրներից է այդ ինքնուրույնության ուժն ու առատ պաշարը. ի՞նչ տեղից, ի՞նչ լեզվից»:[8]

Եվ ահա, այսօր, աշխարհի գլոբալիզացիայի պայմաններում հայկական ինքնատիպ մշակույթը բախվում է արևմտյան քաղաքակրթության հետ: Ի՞նչ կարող է տեղի ունենալ մշակույթների այս բախման ընթացքում, ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ այն հայկական մշակույթի, հայ ժողովրդի և Հայաստանի համար:

Գլոբալիզացիայի հիմնախնդիրներով զբաղվող մշակութաբանները, վերլուծելով արևմտյան և աշխարհի այլ մշակույթների փոխազդեցության առանձնահատկությունները, առաջ են քաշում տարբեր տեսակետներ: Մշակութաբանների մի մասը գլոբալիզացիան նույնացնում է «վեստերնիզացիայի» հետ: Նրանց կարծիքով արևմտյան քաղաքակրթությունը լավագույնն է, և արևմուտքի համաշխարհային առաքելությունը հենց աշխարհում արևմտյան արժեքները արմատավորելն է: Այստեղից հետևություն է արվում, որ արևմտյան քաղաքակրթության տիրապետությունն ամրապնդելու համար պետք է արմատախիլ անել ավանդական հասարակությունների մշակույթը: Այս մոտեցման հիմքում, ըստ էության, ընկած է Եվրոպակենտրոնության հնացած գաղափարը համամարդկային պատմության պտղոմեոսական այն ընկալումը, որը ժամանակին այնպես փայլուն կերպով ջախջախել է Օ.Շպենգլերը: Այս տեսակետը որոշ մշակութաբաններ համարում են «մշակութային իմպերիալիզմի» գաղափարական հիմքը, որն իր էությամբ բարբարոսական է, որքանով որ ուղղված է ավանդական սովորությունների և բարքերի ոչնչացմանը, ճիշտ այնպես, ինչպես ժամանակին Եվրոպան ոչնչացրեց մայաների և ինկերի քաղաքակրթությունը:

Սակայն գլոբալիզացիայի և տարբեր երկրների համար նրա հնարավոր հետևանքների վերաբերյալ կա նաև այլ տեսակետ, որի հիմնական դրույթները ձևավորվել են, այսպես կոչված, գլոբալ մարդաշխարհի (օյկումենա) տեսության շրջանակներում: Այս տեսության համաձայն մարդաշխարհը, այսինքն, մարդկանցով բնակեցված տարածքները մշակութային փոխազդեցության գոտիներ են, ուր տեղի է ունենում մշակութային տեղեկատվության անընդհատ փոխանակություն, մի մշակույթի

երևույթները փոխադրվում են այլ մշակութային լեզվի, և ընդհակառակը: Գլոբալ մարդաշխարհը, որը բազմազան մշակույթների կոնգլոմերատ է, անընդհատ ընդլայնվում է՝ պահպանելով բարդ, ասիմետրիկ կառուցվածքը: Այն ունի մասնագիտացված և տարածաշրջանային տարբեր կենտրոններ: Օրինակ, ԱՄՆ-ը գիտության, տեխնոլոգիաների և զանգվածային մշակույթի կենտրոնն է, Ճապոնիան՝ կորպորատիվ մշակույթի կենտրոնը, Ֆրանսիան՝ նորաձևության և նրբուտեստի կենտրոնը, և այլն: Տարածաշրջանային կենտրոններ են Վատիկանը՝ կաթոլիկ աշխարհի համար, Մեքքան՝ մահմեդական աշխարհի համար, Եգիպտոսը՝ արաբական աշխարհի , Մեքսիկան՝ Լատինական Ամերիկայի երկրների համար, և այլն: [9]

Այս տեսության կողմնակիցների կարծիքով գլոբալիզացիան կարող է զարգանալ տարբեր ուղղություններով: Ուղիներից մեկը մշակութային հասունացման կամ մշակույթների ներդաշնակ զարգացման ուղին է: Ենթադրվում է, որ այդ դեպքում գլոբալ աշխարհում տեղի է ունենում մշակույթների հավասարարժեք երկխոսություն, տեղեկատվության փոխանակություն՝ մետրոպոլիաների և ծայրամասերի միջև: Ընդ որում, մետրոպոլիաների մշակույթը հանդես է գալիս, որպես ծայրամասերի մշակույթը խթանող ուժ: Նա կենդանացնում, հարստացնում է տեղային մշակույթը, նպաստում վերջինիս աշխուժացմանը և զարգացմանը: Ենթադրվում է, որ մարդաշխարհի ծայրամասում ակտիվորեն քննարկում և մեկնաբանում են մշակութային հոսքը և հակադարձ ազդեցություն գործում մետրոպոլիաների մշակույթի վրա: Մշակույթների նման փոխազդեցության հետևանքով տեղի է ունենում մշակույթների հիբրիդիզացիա, և տարբեր մշակույթները վերածվում են բարդ, սինթետիկ կազմավորումների, որտեղ տեղային մշակույթների խորքային շերտերը միահյուսվում են վերազգային մշակույթի տարրերին:

Գլոբալիզացիայի զարգացման մյուս հնարավոր ուղին մարդաշխարհը համահարթեցնող վեստերնիզացիան է, որի մասին վերը նշվեց: Այս ուղին է ի վերջո հանգեցնում է արևմտյան մշակույթի լիակատար տիրապետությանը: Այս դեպքում մարդաշխարհի այս կամ այն տարածքում պատճենվում են արևմտյան քաղաքակրթության արժեքները, ապրելակերպը, կենսաոճը: Տեղային մշակույթն աստիճանաբար ներծծվում է արևմտյան մշակույթի մեջ, տեղային մշա-

կույթի ավանդույթներն սկսում են անհայտանալ. մշակութային տարբերություններն իրենց տեղը զիջում են մշակութային միատեսակությանը, որը հանգեցնում է տեղային մշակույթի վախճանին: Այս ուղին, ըստ էության, տանում է դեպի «մշակութային իմպերիալիզմի» փակուղին:

Կա նաև գլոբալիզացիայի մեկ այլ ուղի, որն անվանվում է «ծայրամասային կոռուպցիայի» ուղի: Այս դեպքում մետրոպոլիայի մշակույթը, մարդաշխարհի ծայրամասերում հարմարվելու ընթացքում, սկսում է քայքայվել: Արևմուտքի բարձր ինտելեկտուալ մշակույթը զտվում է, տեղային մշակույթը ընդօրինակում և յուրացնում է մետրոպոլիայի մշակույթի ամենաստորին մակարդակի տարրերը, ինչպես, օրինակ, երբ գռեհիկ երաժշտությունը գերադասվում է արևմուտքի դասական երաժշտությունից, դետեկտիվ և էրոտիկ գրականությունը Շեքսպիրից և այլն: Ստիճանաբար, մարդաշխարհի ծայրամասը վերածվում է արևմտյան քաղաքակրթության յուրատեսակ աղբանոցի:[10]

Եթե հայկական և արևմտյան մշակույթների փոխազդեցությունը դիտենք գլոբալ մարդաշխարհի տեսության առումով ապա կարող ենք ասել, որ Հայաստանում գլոբալիզացիան ընթանում է, հիմնականում, վերջին երկու ուղիներով, այսինքն, վեստերնիզացիայի և արևմուտքի մշակութային աղբանոցի վերածվելու ուղիով: Ներկայումս Հայաստանի հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում սկսվել են արմատավորվել արևմտյան քաղաքակրթության արժեքներ, այդպիսիք տարածվում են Հայաստանում արմատներ գցած արևմտյան տարբեր կազմակերպությունների նպատակասլաց ակտիվ գործունեության, Եվրոխորհրդի, ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից պարտադրված համապատասխան օրենսդրական ակտեր ընդունելու միջոցով, ինչպես նաև տարերայնորեն: Ակնհայտ փոփոխություններ են կատարվում նաև մեր ընտանեկան կյանքում, ապրելակերպում, կենցաղում, ժամանցի մեջ և այլուր: Ներկայումս առանց մտածելու, մեքենաբար ընդօրինակվում են արևմտյան քաղաքակրթության արժեքների հատկապես արտաքին դրսևորումները, որը հանգեցնում է դրանց աղավաղմանը:

Արևմտյան քաղաքակրթության ազդեցության բացասական կողմերը քննարկելով քաղաքագիտական գրականության մեջ նշվում է հետևյալը. «Մարդկային հոգեբանությունն այնպիսին է, որ սկզբում ընկալվում են այն

երևույթները, որոնք գտնվում են մակերեսին: Արևմտյան քաղաքակրթության արտաքին պտուղները՝ սպառման բարձր մակարդակի, ժամանցի և զվարճությունների ինդուստրիայի, կենցաղային հարմարավետության ձևով, մյուս մշակույթների կողմից թմրամիջոցների պես ակնթարթորեն ներծծվում են: Սակայն ցանկացած քաղաքակրթության թերությունները և գայթակղությունները հավասարակշռվում են նրա արժանիքներով: Արևմտյան մշակույթի քմահաճ ներքին խաղը քրտնաջան աշխատանքի և հեդոնիստական սպառման միջև նուրբ հավասարակշռության պահպանման մեջ է: Քմահաճույքների և զգայական հաճույքների ազատությունն այն թույնն է, որն արտադրում է արևմուտքը, բայց ինքը դրանից չի կործանվում: Հակաթույնի դերը կատարում է բողոքական էթիկան՝ կարգապահ աշխատանք, մասնագիտական պատասխանատվություն, հարգանք՝ օրենքի նկատմամբ»:[11] Հայաստանը, ինչպես նաև վեստերնիզացիայի և մշակութային աղբանոցի վերածվող այլ երկրները, ներծծելով արևմտյան քաղաքակրթության թույնը՝ զրկված են այդ քաղաքակրթության հակաթույնից կամ անտեսում են այն, որի հետևանքով սկսում են քայքայվելլ այդ երկրների հասարակական կյանքի և բարոյականության հիմքերը:

Այս ամենը վկայում է, որ գլոբալիզացիան նոր և յուրովի Մարտահրավեր է Հայաստանին և հայ մշակույթին: Կկարողանա՞ արդյոք Հայաստանը պատասխանել այդ Մարտահրավերին, եթե այո, ապա ինչպիսի՞ն կլինի պատասխանը, գլոբալ աշխարհում ինչպիսի՞ ռազմավարություն կընտրի Հայաստանը: Առանց չափազանցության կարելի է ասել, որ ճիշտ պատասխանից և հմուտ ռազմավարությունից է կախված Հայաստանի և հայ ժողովրդի ապագան:

Արդեն նշեցինք, որ անգլիացի պատմաբան Ա.Թոյնբին քաղաքակրթությունների զարգացումը կամ փլուզումը կապում էր «Մարտահրավեր- և - Պատասխան» օրենքի գործողության հետ: Նա գտնում էր, որ տարբեր քաղաքակրթություններ տարբեր կերպ են պատասխանում ավելի զորեղ քաղաքակրթության Մարտահրավերին: Նրա կարծիքով գոյություն ունի ավելի թույլ քաղաքակրթությունների երկու համապարփակ ռազմավարություն, որոնք անվանում էր «զիլոտիզմ» և «հերովդեսականություն»: Նրա կարծիքով, բոլոր հնարավոր պատասխաններն ի վերջո հանգում են այդ երկու պատասխաններից որևէ մեկին: Ի՞նչ են իրենից ներկայացնում ռազմավարության այս երկու

տարբերակները՝ ավելի հզոր քաղաքակրթության կողմից նետված Մարտահրավերին պատասխանելու երկու տարբերակները: Քննարկենք դրանց էությունը, քանի որ մեր կարծիքով, դրանք հասարակության կողմից միջավայրին հարմարվելու համապարփակ դրսևորումներ են, ագրեսիայի և ընկրկման դրսևորումներ, որոնք այսօր էլ հրատապ են, հատկապես, Հայաստանի համար:

Հզոր քաղաքակրթությունների ազդեցությանը հակադրվելու ռազմավարության այս երկու տարբերակները ծագում են հին աշխարհի պատմական փորձից, որը ձևավորվել է հելլենիստական մշակույթի ներթափանցմանը դիմագրավելու ընթացքում: Զիլոտների համայնքը փորձում էր թշնամուն դիմակայել՝ հայրենի բարքերը և ավանդույթները խստորեն պահպանելու, դրանցից մազաչափ անգամ չշեղվելու միջոցով: Զիլոտները մերժում էին ամեն մի օտար երևույթ, դրական լիներ այն, թե բացասական: Հերովդեսականները վարվում էին ճիշտ հակառակ կերպ: Հասկանալով և ընդունելով թշնամու գերազանցությունը՝ նրանք հրաժարվում էին իրենց ռազմական արվեստից, սովորում էին հակառակորդի հետ պատերազմել նրա իսկ զենքով: Այս ռազմավարության դեպքում պետք է նուրբ հավասարակշռություն պահպանել օտարամուտ և տեղային մշակութային տարրերի միջև, ընկալել և ներդնել միայն դրական տարրերը: [12]

Քաղաքագիտության մեջ այն տեսակետն է հայտնվում, որ հզոր քաղաքակրթությունների ազդեցությանը դիմագրավելու ռազմավարության այս երկու տարբերակները՝ զիլոտիզմը և հերովդեսականությունը կարող էին արդյունավետ լինել միայն անցյալ դարի առաջին կեսին: Մարդկության հետագա զարգացումը հանգեցրել է նրան, որ զիլոտիզմը և հերովդեսականությունը ի սկզբանե դատապարտված են ձախողման: Հետևողական զիլոտիզմը քաղաքակրթության մեկուսացումն է, հետևաբար՝ կործանումը, իսկ հերովդեսականությունը՝ հզոր քաղաքակրթության անբաժան տիրապետությունը, որին նույնպես հետևում է տեղային մշակույթի կործանումը»:[13] Նշվում է նաև, որ անցյալ դարի երկրորդ կեսին մշակվել է հզոր քաղաքակրթությանը դիմակայելու ևս մեկ ռազմավարություն՝ միմիկրիան, որն իր տեղը զիջել է մեկ այլ ռազմավարության՝ «բարոյական երկաթե վարագույրի» ռազմավարությանը»:[14]

Միմիկրիայի էությունն այն է, որ տեղային քաղաքակրթությունը վերցնում է հզոր քաղաքակրթության տարրերի արտաքին ձևը՝ նրան հաղորդելով իր ներքին բովանդակությունը: Միմիկրիայի հաջող կիրառման օրինակ է համարվում Ճապոնիայի փորձը: Իսկապես, Ճապոնիայում քաղաքական մակրոկառուցվածքը՝ պառլամենտական ժողովրդավարության, սահմանադրականության, իրավական պետության և դասական ժողովրդավարության այլ դրսևորումների ձևով, ստեղծված է խմբային, կոլեկտիվիստական սկզբունքների պահպանման պայմաններում:[15] Փաստորեն, Ճապոնիան, փոխառելով արևմտյան քաղաքակրթության որոշ ինստիտուտներ, քաղաքական կյանքը կազմակերպելով արևմտյան մշակույթի չափանիշներով, միևնույն ժամանակ պահպանում և ամրապնդում է ազգային մշակույթը այլ ոլորտներում՝ գիտության, տնտեսության մեջ, արվեստում:

Սակայն կարծիք է հայտվում, որ միմիկրիայի ռազմավարությունը ներկայումս նույնպես դատապարտված է ձախողման, քանի որ հեռահաղորդակցման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հզոր քաղաքակրթություններին հնարավորություն է տալիս իրենց ազդեցությունը դարձնել արտահնստիտուցիոնալ, անհատական, ներազդել ամեն մի կոնկրետ մարդու վրա անմիջականորեն: Համապատասխանաբար, առաջարկվում է հզոր քաղաքակարթություններին դիմակայելու մեկ ուրիշ ռազմավարություն՝ «բարոյական երկաթե վարագույրի» ռազմավարությունը, որի համաձայն հասարակությունը պետք է ընթանա արդիականացման ուղիով, բայց առանց վեստերնիզացիայի, ըստ ամենայնի ամրապնդելով ազգային-հոգևոր արժեքները:

Դժվար չէ նկատել, որ եթե միմիկրիայի ռազմավարությունը հերովդեսականության տարատեսակ է, ապա «բարոյական երկաթե վարագույրի» ռազմավարությունը, զելոտիզմի և հերովդեսականության յուրահատուկ զուգակցություն: Հարց է առաջանում՝ իսկ ինչպիսի՞ն պետք է լինի Հայաստանի ռազմավարությունը՝ արևմտյան քաղաքակրթության հետ փոխազդեցության ընթացքում: Եթե զիլոտիզմի և հերովդեսականության տարբերակները գլոբալիզացիայի պայմաններում դատապարտված են ձախողման, ուրեմն արևմուտքի քաղաքակրթության հաղթարշավը և մշակույթների համահարթեցումը կանխորոշվա՞ծ են: Մեր կարծիքով՝ ոչ: Արևմտյան քաղաքակրթության ճնշմանը

դիմակայելու համար Հայաստանը պետք է մշակի համապատասխան մշակութային քաղաքականություն ընտրելով ռազմավարության իր տարբերակը: Մինչդեռ, ներկայումս հայկական և արևմտյան մշակույթների փոխազդեցությունը տարերային բնույթ է կրում, համենայն դեպս փոխազդեցության մեկ կողմի՝ հայկական մշակույթի համար:

Հայաստանի մշակութային քաղաքակրթության սկզբունքների և արևմտյան քաղաքակրթության բացասական ներգործությանը դիմակայելու ռազմավարական տարբերակների մշակման համար անհրաժեշտ է նախ և առաջ ճիշտ պատկերացում կազմել մշակույթների փոխազդեցության և բախման մասին:

Մշակույթների փոխազդեցությունը և բախումը չափազանց բարդ երևույթներ են: Բանն այն է, որ մշակույթը, որպես ամբողջական երևույթ, միատարր չէ, բաղկացած է բազմաբնույթ բաղադրյալներից և տարրերից: Համապատասխանաբար, հավասարարժեք չէ նաև տարբեր մշակույթների բաղադրյալների և տարրերի փոխազդեցությունը: Այսպես, օրինակ, եթե արևմուտքի գիտատեխնիկական նվաճումները կարելի է պարզապես յուրացնել և օգտագործել նյութական արտադրության մեջ, ապա նույնը չի կարելի ասել բարոյական նորմերի և արժեքների կամ ընտանեկան փոխհարաբերությունների կարգավորման միջոցների մասին: Այստեղից հետևում է, որ մշակույթների փոխազդեցության նկատմամբ պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում: Խիստ տարբերակված պետք է լինի նաև հզոր մշակույթներին դիմակայելու ռազմավարությունը, որը պետք է պայմանավորված լինի տեղային մշակույթի համապատասխան ենթահամակարգերի և նրանց բաղադրյալների առանձնահատկություններով: Դա նշանակում է, որ արևմտյան քաղաքակրթության այս կամ այն տարրը կարող է պարզապես փոխառվել, մեկ այլ տարրի ներթափանցման դեմ պետք է պայքարել, երրորդի ներթափանցումը կանխելու համար պետք է սեփական մշակույթի համապատասխան տարրի զարգացման անհրաժեշտ պայմաններ ստեղծել, մեկ այլ դեպքում՝ արևմտյան մշակույթի տարրի սոսկ ձևական կողմն ընդօրինակել և այլն: Այսինքն, տվյալ դեպքում Հայաստանի մշակութային քաղաքականությունը պետք է որդեգրի մի ռազմավարություն, որը ներառում է ինչպես մշակութային տարրերի ուղղակի փո-

խառությունը. այնպես էլ օտար մշակութային տարրերի ներթափանցման կանխումը, այն է՝ զիլոտիզմը և հերովդեսականությունը՝ իրենց տարատեսակ դրսևորումներով հանդերձ, այդ թվում՝ միմիկրիան և «բարոյական երկաթե վարագույրի» տարբերակները: Այսպիսով, արևմտյան քաղաքակրթության հզոր ազդեցությանը դիմակայելու, այդ Մարտահրավերին պատասխանելու ռազմավարությունը պետք է լինի համալիր և տարբերակված:

Այստեղ կարող է հարց առաջանալ՝ Արևմտյան քաղաքակրթության մի շարք տարրեր փոխառնելով, արդյո՞ք ժամանակի ընթացքում ստիպված չենք լինի փոխառելու նաև այլ տարրեր: Օրինակ, Ա.Թոյնբին համոզված էր, որ գիտական և տեխնիկական փոխառությունները անպայմանորեն հանգեցնում են նաև սոցիալական, բարոյական, հոգեբանական փոփոխությունների, ի վերջո, ազդեցության ենթարկվող հասարակությունը ստիպված է լինում անխուսափելիորեն փոխառելու նաև ավելի հզոր քաղաքակրթության մյուս բոլոր էական տարրերը:[16] Սակայն այս տեսակետը իրավացիորեն քննադատվում է այլ գիտնականների կողմից: Ընդհակառակը, հաստատված է համարվում, որ այլ քաղաքակրթությունների տարրերի փոխառությունը, նախ, կարող է սկսվել ոչ միայն «երկրորդական» ոլորտներում, ինչպիսին է, օրինակ, տեխնիկան, ապա՝ այդ փոխառությունները անհրաժեշտաբար չեն հանգեցնում լրացուցիչ փոխառությունների, և վերջապես, նրանք անպայմանորեն չեն քայքայում փոխառություն կատարող քաղաքակրթությունը:[17]

Հայաստանի մշակութային քաղաքակրթության սկզբունքները և արևմտյան քաղաքակրթության բացասական ազդեցությունը չեզոքացնելու ռազմավարությունը մշակելիս չափազանց կարևոր է հայկական մշակույթի համալիր ուսումնասիրությունը: Այդպիսի ուսումնասիրության առաջին քայլերը Հայաստանում կատարվել են դեռևս անցյալ դարի երկրորդ կեսին, երբ մի խումբ հայ մշակութաբաններ և ազգագրագետներ ձեռնարկել են էթնոմշակութաբանական հետազոտության մի փորձ, որի ընթացքում խնդիր էր դրվել հայ գյուղական մշակույթի նյութերի հիման վրա ուսումնասիրել հայերի կենսապահովման մշակույթը:[18] Մեզ հետաքրքրող հիմնախնդիրների տեսակետներից ուշադրության է արժանի այդ աշխատանքի հատկապես տեսական մասը, որը, հայ մշակութաբան է.Մարկարյանի կողմից ձևակերպված մշակույթի տեսու-

թյունը հիմք ընդունելով, բացահայտում է մշակույթի էությունը, էթնիկական մշակույթի բնույթը, վերջինիս ուսումնասիրության համակարգային միջոցները:

Նշված աշխատանքում էթնիկական հանրություն ասելով պետք է նկատի ունենալ այնպիսի հանրությունը, որը կապված է որոշակի ընդհանուր մշակույթով: Այսինքն, էթնիկական հանրությունը ամենից առաջ մշակութային հանրություն է, սակայն էթնոս է համարվում որոշակի էթնիկական ինքնագիտակցություն ունեցող մշակութային հանրությունը, որի այդ ինքնագիտակցության արտաքին արտահայտությունն է ընդհանուր ինքնանվանումը (էթնոնիմ): Էթնոսի, որպես մշակութային հանրության բնութագիրը անհրաժեշտ է դարձնում սահմանազատել «էթնոսի մշակույթ» և «էթնիկական մշակույթ» հասկացությունները: Էթնոսի մշակույթը բնութագրվում է որպես այնպիսի եղանակների ամբողջություն, որով ինստիտուտիզացիայի են ենթարկվում մարդկային գործունեության տարբեր տեսակները, և ապահովում են էթնոսի գործունեությունը և զարգացումը: Մինչդեռ էթնիկական մշակույթը արտահայտվում է մշակույթի բոլոր կամ մի շարք էթնոսների համար համընդհանուր տարրերի անհատական, ինքնատիպ զուգակցման, այդ տարրերի յուրահատուկ, էթնիկական արտահայտվածության և դրոշմավորվածության մեջ: [19]

Էթնոսի մշակույթի վերլուծության անհրաժեշտությունից ելնելով առանձնացվում է երկու ենթահամակարգ՝ նյութական և սոցիալ-տեխնոլոգիական մշակույթ: Նյութական մշակույթի ենթահամակարգը իր հերթին բաղկացած է երկու բաղադրատարրից՝ նախնական արտադրության մշակույթ և կենսապահովման մշակույթ: Վերջինս իր հերթին կազմված է մի քանի բաղադրյալից՝ բնակարանային-բնակավայրային համալիր, սննդի համալիր, հագուստի համալիր: Երկրորդ՝ սոցիալ-տեխնոլոգիական ենթահամակարգն ընդգրկում է սոցիոնորմատիվ, հումանիտար և կոգնիտիվ բաղադրյալները:[20] Սոցիալ-տեխնոլոգիական ենթահամակարգը ընդգրկում է հասարակական կյանքի ներքին կազմակերպման այս կամ այն եղանակի ապահովման երկակի միջոցներ: Այդ միջոցների մի խումբը սոցիոնորմատիվ մշակույթի սոցիալական ինստիտուտների և դրանցից յուրաքանչյուրի սահմաններում գործող նորմատիվ համակարգերի ամբողջությունն է (աշխատանքի բաժանման, սեփականության, ազգակցության, ընտա-

նիքի, հասարակական կառավարման ինստիտուտներ և այլն): Այս ինստիտուտները և համապատասխան նորմատիվ համակարգերը կարգավորում են մարդկանց գործունեության արտաքին սոցիալական ձևերը և չեն շոշափում այդ գործունեության մոտիվացիոն կողմերը: Հասարակական կյանքի ներքին կազմակերպման եղանակների ապահովման միջոցների մյուս խումբը հումանիտար մշակույթը ուղղված է մարդկանց գործունեության սոցիալականորեն նպատակահարմար որոշակի դրդապատճառների ձևավորմանը, հետևաբար, ուղղված է մարդկային գիտակցությանը: Այդ միջոցների մեջ են մտնում արժեքորմատիվ և աշխարհահայացքային տարբեր գաղափարներ և պատկերացումներ, որոնք կարող են ունենալ բարոյական, կրոնական, գեղագիտական և այլ բնույթ:[21] Սոցիալ-տեխնոլոգիական ենթահամակարգում առանձնացվում է նաև մեկ ուրիշ բաղադրատարր՝ կոգնիտիվ մշակույթը, որի մեջ ներառվում են գիտությունը, կրոնը, արվեստը, բարոյականությունը:[22] Ընդ որում, սոցիալ-տեխնոլոգիական ենթահամակարգի տարրերը այս կամ այն կերպ իրենց արտահայտությունն են գտնում նյութական մշակույթի ենթահամակարգի բաղադրյալներում և տարրերում:

Մշակույթի այսպիսի ըմբռնման պայմաններում որոշակի հետևություններ կարելի է անել արևմտյան մշակույթի և Հայաստանի մշակույթի փոխազդեցության վերաբերյալ: Ակնհայտ է, որ արևմտյան մշակույթի այն ձեռքբերումները, որոնք կապված են նյութական մշակույթի ենթահամակարգի հետ, կարող են փոխառվել, յուրացվել և դարձվել Հայաստանի մշակութային սեփականությունը: Այդ դեպքում Հայաստանը կարող է օգտվել նաև գլոբալիզացիայի դրական կողմերից, այն է՝ ապրանքների արտադրության աճ, գյուղատնտեսության մեջ երկրորդ «կանաչ հեղափոխության» հետևանքով բույսերի և կենդանիների բնույթի ժառանգական փոփոխությունների հիման վրա՝ սննդամթերքի արտադրության աճ, և այլն: Կարող են փոխառվել նաև կենսապահովման մշակույթի տարրեր, ինչպես օրինակ, բնակարանային պայմանները, մարդկանց սնունդը, հագուստը, կահույքը, կահ-կարասին և այլն: Այստեղ պետք է միայն նկատի ունենալ, որ նյութական մշակույթի տարրերը փոխառելիս անհրաժեշտ է անխաթար պահել Հայաստանի նյութական մշակույթում արտահայտված սոցիալ-տեխնոլոգիական տարրերի անաղարտությունը: Այսպես, օրինակ, կնոջ՝

արևմուտքից փոխառված հագուստը, որը հագիվ է նրա մերկությունը ծածկում, հակասում է հայկական մշակույթի սոցիալ-տեխնոլոգիական տարրերին:

Ինչպես արդեն նշել ենք, բացի նյութական մշակույթի և սոցիալ-տեխնոլոգիական մշակույթի ենթահամակարգերից, առանձնացվում է նաև մեկ այլ ենթահամակարգ հասարակական-բնապահպանական մշակույթը, որն ընդգրկում է տվյալ հասարակության և մյուս հասարակությունների կարգավորված փոխազդեցությունը: Տվյալ հասարակությունը մյուս հասարակությունների հետ փոխազդեցության մեջ է մտանում ինստիտուցիոնալիզացված միջոցներով (դիվանագիտական, տեխնիկական, գիտական, առևտրային և այլն) կամ ռազմական միջոցներով:[23] Հայաստանի մշակույթի այս ենթահամակարգում նույնպես, արևմտյան մշակույթի համապատասխան տարրերի փոխառումը, յուրացումը և արմատավորումը կնպաստի միայն Հայաստանի միջազգային հարաբերությունների մշակույթի զարգացմանը, ինչու չէ, նաև՝ պատերազմի արվեստի կատարելագործմանը:

Ինչ վերաբերում է Հայաստանի մշակույթի սոցիալ-տեխնոլոգիական ենթահամակարգի բաղադրյալների և տարրերի և արևմտյան մշակույթի համապատասխան բաղադրյալների փոխազդեցությանը, ապա այստեղ խնդիրը ավելի քան բարդ է: Այս ենթահամակարգի սոցիոնորմատիվ բաղադրյալի առանձին ինստիտուտներ, հատկապես այնպիսիք, որոնց շրջանակներում գործում են բարոյական, կրոնական, մասամբ իրավական և գեղագիտական նորմեր, պետք է անձեռնմխելի լինեն արևմտյան մշակույթի համապատասխան տարրերի համար: Այդպիսիք են, օրինակ, ամուսնության, ընտանիքի, բարեկամության, ընկերության ինստիտուտները և այլն: Մինչդեռ, Հայաստանում տեղի է ունենում ճիշտ հակառակը: Այսպես, օրինակ, վերջերս մշակվում է ամուսնության և ընտանիքի մասին Հայաստանի օրենսգրքի նոր նախագիծ: Ոչ Եվրոխորհուրդը, ոչ էլ միջազգային կամ իրավապաշտպան այլ կազմակերպություն Հայաստանին չեն պարտադրում ամուսնական պայմանագրի ինստիտուտը: Սակայն Հայաստանի որոշ քաղաքական շրջանակներում լրջորեն քննարկվում և «հիմնավորվում է» ամուսնական պայմանագրի օրենսդրական ամրապնդման անհրաժեշտությունը: Սակայն ամուսնական պայմանագրի ներդրումը նշանակում է մի բան հայ ընտանիքը

վերածել համատեղ ձեռնարկության, ամուսնությունը՝ պայմանագրի, սերը՝ սեքսի: Նույնը կարելի է ասել նաև համասեռամոլների ամուսնությունը օրենքով թույլատրելու մասին: Այսպիսի իրավական նորմերը և նոր ինստիտուտները կարող են քայքայել հայ հասարակության բարոյական հիմքերը և ոչնչացնել հիմնարար արժեքները:

Բերենք մեկ այլ օրինակ: Մարդու իրավունքները ամրապնդող մի շարք օրենսդրական ակտերի ընդունումը ըստ ամենայնի խրախուսվում է, դրանով մենք պարծենում ենք, կարծում ենք, թե ավելի քաղաքակիրթ ենք դառնում: Չվիճարկելով Հայաստանում մարդու իրավունքները երաշխավորելու և պաշտպանելու անհրաժեշտությունը, նշենք, որ միաժամանակ պետք է ամրապնդել և զարգացնել համապատասխան հարաբերությունների բարոյական կողմը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդու իրավունքների հետևողական կիրառումը հանգեցնում է անհատի մեկուսացմանը, նրա վարքագիծը կողմնորոշվում է դեպի սեփական անձը, որը սեպ է խրում մարդկային հարաբերությունների մեջ և արհամարանք է ծնում հասարակության, նաև՝ պետության նկատմամբ:

Պետք է չափազանց զգույշ լինել Հայաստանի մշակույթի սոցիալ-տեխնոլոգիական ենթահամակարգի հատկապես հումանիտար բաղադրյալի փոփոխությունների հարցում: Այս բաղադրյալի մեջ ներառված բարոյական, կրոնական հիմնարար արժեքները, և արժեքային կողմնորոշումները, պետք է ոչ միայն անձեռնմխելի լինեն արևմտյան մշակույթի համապատասխան տարրերի համար, այլև ստեղծվեն նրանց զարգացման անհրաժեշտ պայմաններ:

Ինչ վերաբերում է սոցիալ-տեխնոլոգիական համակարգի կոգնիտիվ բաղադրյալին, ապա այստեղ նույնպես պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում: Եթե արևմտյան քաղաքակրթության գիտական հայացքները, ինչպես նշեցինք, կարելի յուրացնել և գիտական շրջառության մեջ դնել, ապա արվեստը, կրոնը, բարոյականությունը պետք է պահպանել և ստեղծել դրանց զարգացման անհրաժեշտ պայմաններ:

Հայաստանի մշակութային քաղաքականությունը մշակելիս պետք է նկատի ունենալ նաև, որ մշակույթի բոլոր ենթահամակարգերը, բաղադրյալները և տարրերը սերտորեն միահյուսված են, գտնվում են փոխադարձ կապի և փոխ-

պայմանավարվածության մեջ: Այդ առումով, պետք է հաշվի առնել, թե կոնկրետ ենթահամակարգում, բաղադրյալում կամ տարրում կատարվող փոփոխությունները ինչպես կանդրադառնան և ինչ հետևանքներ կունենան մշակույթի մյուս բաղադրյալների և տարրերի համար: Դա չափազանց բարդ, բայց լուծելի խնդիր է: Այս պայմաններում միայն Հայաստանի մշակույթը կարող է պատասխանել արևմուտքի նետած Մարտահարվերին և ձեռք բերել որակապես նոր մակարդակ:

Նշված սկզբունքները և տեսակետները հիմք ընդունելով կարելի է քննարկել նաև Հայաստանի արդի քաղաքական մշակույթի զարգացման հեռանկարները: Արևմտյան քաղաքական մշակույթի տարրերը կարող են փոխառվել և ներդրվել Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում, որքանով որ դրանք չեն հակասում հայկական մշակույթի սոցիալ-տեխնոլոգիական ենթահամակարգի հիմնական տարրերին: Բացի այդ, մենք չունենք քաղաքական կյանքի ժամանակակից կազմակերպման փորձ: Այսպես, օրինակ, Հայաստանի պետական կառավարման ձևը, դարեր շարունակ եղել է բացարձակ միապետությունը, իսկ անցյալ դարասկզբին, շատ կարճ ժամանակով պառլամենտական հանրապետությունը, և այս պայմաններում արևմտյան քաղաքական մշակույթի համապատասխան տարրերը, քաղաքական կյանքի կազմակերպման արևմտյան ձևը ընդունելի են Հայաստանի համար: Մանավանդ, հաշվի առնելով այն, որ սովորաբար քաղաքակրթությունը դիմում է փոխառման այն դեպքում, երբ նա, ելնելով սեփական ռեսուրսներից, ի վիճակի չէ լուծելու հիմնախնդիրը:[24] Արևմտյան քաղաքական մշակույթը պարունակում է արևմտյան քաղաքակրթության հենց այն տարրերը, որոնք կարող են փոխառվել և կիրառվել Հայաստանում միաժամանակ պահպանելով և ամրապնդելով դրանց հետ կապված հարաբերությունների բարոյական կողմը: Ընդ որում անհրաժեշտ է ոչ միայն փոխառել արևմտյան քաղաքական մշակույթի տարրերը, այլև ապահովել դրանց հստակ գործողությունը:

Այդ հարցը լուծելու համար անհրաժեշտ է վեր հանել այն հիմնախնդիրները, որոնք կապված են արևմտյան քաղաքական մշակույթի տարրերի ներդրման և Հայաստանի պայմաններում նրանց գործողության հստակեցման և կատարելագործման հետ:

Օգտագործված գրականության ցանկ

[1]Шведков Ю.А., Противоречия глобализации. В ежемесячнике "США.Канада", N12, 2000г.
[2] Гаджиев К.С., Геополитика, М. 1997г.,с. 110.
[3] Huntington S., American Politics: The Promise of Disharmong. Cambridge, 1981, p. 25.
[4]Մշակույթների հավասարարժեքության տեսության քննադատական վերլուծությունը տես, Маркарян Э.С., О концепции локальных цивилизаций, Ереван, 1962г.
[5] Тойнби А., Постижение истории, М.1991г., с. 356.
[6] Тойнби А., Постижение истории, с.33.
[7] Тойнби А., Постижение истории, с 125.
[8] Ն.Մառ, Հայկական մշակույթը, Երևան, 1978թ., էջ 25-26:
[9] Василенко И.А., Политическая глобалистика, М. 2000г., с. 316.
[10] Василенко И.А., Политическая глобалистика, с. 316.
[11] Василенко И.А., Политическая глобалистика, с.60.
[12] Тойнби А., Постижение истории, с. 590-591.
[13] Василенко И.А., Политическая глобалистика, с. 155.
[14] Василенко И.А., Политическая глобалистика, с. 69.
[15] Гаджиев К.С., Геополитика, М. 1997г., с. 155.
[16] Тойнби А., Постижение истории, с. 577.
[17]Г.Э. фон Грюнебаум. Культурные заимствования во взаимодействии цивилизаций, в кн. Сравнительное изучение цивилизаций, М. 1999г., с. 497.
[18]Культура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультороли гического исследования, Ереван, 1983г.
[19] Культура жизнеобеспечения и этнос, с.53
[20] Культура жизнеобеспечения и этнос, с. 55.
[21] Культура жизнеобеспечения и этнос, с. 63.
[22] Маркарян Э.С., Теория культуры и современная наука, с.70.
[23] Маркарян Э.С., Теория культуры и современная наука, с. 64.
[24] Г.Э. фон Грюнебаум. Культурные заимствования во взаимодействии цивилизаций, в кн. Сравнительное изучение цивилизаций, М. 1999г., с. 497.